# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԲԻ ԹՈՒ ԲԻ ՍՊԸ-ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | David Surgical,Kangji | David Surgical,Kangji | David Surgical,Kangji | Ningbo David Medical Device Co., Ltd.,Hangzhou Kangji Medical Instrument Co.,Ltd.,Չինաստան | 1-01 Կոշտ տելեսկոպ՝ 30° անվանական դիտման անկյունով, արտաքին տրամագիծը՝ 9.5–10.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 310–350 մմ: Օպտիկական համակարգը պետք է ապահովի բարձր հստակության պատկերի փոխանցում, դաշտի հավասար լուսավորում և տեսանելի աղավաղումների բացակայություն: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն, արտադրողի հրահանգով գոլորշային ավտոկլավացման համար նախատեսված: Ակնապանակի և |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | լուսային միակցիչի համատեղելիությունը՝ ըստ «Համատեղելիություն» թերթի, կամ մատակարարը ներառում է անհրաժեշտ ադապտերները: 1-02 Բազմակի օգտագործման կլիպադրիչ՝ առաջարկվող XL չափի պոլիմերային կլիպների համար, լիսեռի արտաքին տրամագիծը՝ ոչ ավելի, քան 10.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 310–350 մմ: Կառավարվող և լիարժեք ծնոտային փակում, կլիպի կայուն պահում և ազատում, էրգոնոմիկ բռնակ: Կոռոզիակայուն և արտադրողի հրահանգով գոլորշային ավտոկլավացվող: Եթե կիրառվելու են կենտրոնում առկա կլիպները՝ պարտադիր է փաստաթղթավորված համատեղելիությունը: 1-03 Բազմակի օգտագործման կլիպադրիչ՝ առաջարկվող L չափի պոլիմերային կլիպների համար, լիսեռի արտաքին տրամագիծը՝ ոչ ավելի, քան 10.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 310–350 մմ: Կառավարվող և լիարժեք ծնոտային փակում, կլիպի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կայուն պահում և ազատում, Էրգոնոմիկ բռնակ: Կոռոզիակայուն և արտադրողի հրահանգով գոլորշային ավտոկլավացվող: Եթե կիրառվելու են կենտրոնում առկա կլիպները՝ պարտադիր է փաստաթղթավորված համատեղելիությունը: 1-04 Բազմակի օգտագործման, միակողմանի գործողությամբ կամ գործառութային համարժեք կլիպադրիչ՝ Տ չափի տիտանե կլիպների համար: Լիսեռի արտաքին տրամագիծը՝ ոչ ավելի, քան 5.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 310–350 մմ: Ճշգրիտ ծնոտային համընկնում, կլիպի կայուն պահում, Էրգոնոմիկ բռնակ: Կոռոզիակայուն և արտադրողի հրահանգով գոլորշային ավտոկլավացվող: 1-05 Կիսալուսնաձև աշխատանքային ծայրով հանգույց մղող գործիք, տրամագիծը՝ ոչ ավելի, քան 5.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 310–350 մմ: Նախատեսված է էնդոսկոպիկ կարերի հանգույցների առաջմղման և ֆիքսման համար: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն, արտադրողի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հրահանգով գոլորշային ավտոկլավացվող: 1-06 Կարթաձև աշխատանքային ծայրով, արտիկուլացվող մոնոպոլար էլեկտրոդ՝ հյուսվածքների դիսեկցիայի, կտրման և կոագուլյացիայի համար: Լիսեռի տրամագիծը՝ ոչ ավելի, քան 5.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 390–430 մմ: Վնասումներից պաշտպանված էլեկտրական մեկուսացում, կառավարվող արտիկուլյացիա, բազմակի օգտագործման և արտադրողի հրահանգով գոլորշային ավտոկլավացվող: Ներառել առկա գեներատորին համապատասխան մալուխ/ադապտեր, եթե այն գործիքի անբաժանելի մասը չէ: 1-07 Կարթաձև աշխատանքային ծայրով մոնոպոլար էլեկտրոդ՝ դիսեկցիայի, կտրման և կոագուլյացիայի համար: Լիսեռի տրամագիծը՝ ոչ ավելի, քան 5.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 310–350 մմ: Վնասումներից պաշտպանված մեկուսացում, էրգոնոմիկ կառավարում, բազմակի օգտագործման և արտադրողի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հրահանգով գոլորշային ավտոկլավացվող: Ներառել առկա գեներատորին համապատասխան մալուխ/ադապտեր, եթե անհրաժեշտ է: 1-08 Կոր շեղբերով և բութ ծայրերով երկար վիրաբուժական մկրատ՝ նուրբ դիսեկցիայի համար: Աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ, կտրող հատվածի անվանական լայնությունը՝ 3–4 մմ: Հարթ և համաչափ կտրում, առանց շեղբերի բացվածքի կամ խցանման: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: 1-09 Կոր բռնող ծայրերով ասեղնաբռնիչ, աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ, ռատչետ կամ համարժեք ֆիքսող մեխանիզմով: Պետք է ապահովի ասեղի կայուն պահում՝ առանց սահքի և վնասման: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: 1-10 Ատրավմատիկ Դեբեքեյ տիպի աշխատանքային մակերեսով, կոր կամ ուղիղ անկյուն ձևավորող բռնող ծայրերով դիսեկցիոն պինցետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Би Ту Би ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Աշխատանքային երկարությունը` 320–360 մմ, ռատչետ կամ համարժեք ֆիքսող մեխանիզմով։ Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող։ 1-11 Ատրավմատիկ Դեբեքեյ տիպի հեմոստատիկ պինցետ` 23–27 մմ անվանական անկյունային աշխատանքային հատվածով, աշխատանքային երկարությունը` 320–360 մմ, ռատչետ կամ համարժեք ֆիքսմամբ։ Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող։ 1-12 Ատրավմատիկ Դեբեքեյ տիպի հեմոստատիկ պինցետ` 18–22 մմ անվանական անկյունային աշխատանքային հատվածով, աշխատանքային երկարությունը` 320–360 մմ, ռատչետ կամ համարժեք ֆիքսմամբ։ Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող։ 1-13 Կոր օվալաձև բռնող ծայրերով, ատամնավոր կամ գործառութային համարժեք մակերեսով պինցետ։ Ծայրերի անվանական լայնությունը` 7–9 մմ, աշխատանքային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | երկարությունը՝ 320–360 մմ: Պետք է ապահովի հյուսվածքի կայուն, հնարավորինս ատրավմատիկ բռնում: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: 1-14 Կոր օվալաձև բռնող ծայրերով, ատամնավոր կամ գործառության համարժեք մակերեսով պինցետ: Ծայրերի անվանական լայնությունը՝ 9–11 մմ, աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ: Պետք է ապահովի հյուսվածքի կայուն, հնարավորինս ատրավմատիկ բռնում: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: 1-15 Կոր բռնող ծայրերով, քառակուսի ձևի և ատամնավոր կամ գործառության համարժեք աշխատանքային մակերեսով պինցետ: Ծայրերի անվանական լայնությունը՝ 4–6 մմ, աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: 1-16 Բանանաձև կորությամբ, ժապավենաձև կամ գործառության համարժեք ատրավմատիկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքային ծայրով պինցետ։ Ծայրի անվանական լայնությունը՝ 9–11 մմ, աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ։ Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող։ 1-17 Լիմֆատիկ հանգույցների և նուրբ հյուսվածքների բռնման/դիսեկցիայի համար ատրավմատիկ պինցետ։ Ծայրի անվանական լայնությունը՝ 9–11 մմ, աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ, ռատչետ կամ համարժեք ֆիքսմամբ։ Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող։ 1-18 Թոքային հյուսվածքի մանիպուլյացիայի համար ատրավմատիկ բռնիչ՝ եռանկյունաձև կամ գործառության համարժեք ծայրով, անվանական լայնությունը՝ 5–7 մմ, աշխատանքային երկարությունը՝ 320–360 մմ, ռատչետ կամ համարժեք ֆիքսմամբ։ Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող։ 1-19 Վիրաբուժական ներծծման գործիք՝ արտաքին տրամագիծը 5.5–6.5 մմ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքային երկարությունը՝ 240–260 մմ, չսահող բռնման մակերեսով: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: Համատեղելի առկա ներծծման խողովակաշարի հետ կամ ներառված համապատասխան ադապտերով: 1-20 Վիրաբուժական ներծծման գործիք՝ արտաքին տրամագիծը 5.5–6.5 մմ, աշխատանքային երկարությունը՝ 270–290 մմ, չսահող բռնման մակերեսով: Բազմակի օգտագործման, կոռոզիակայուն և գոլորշային ավտոկլավացվող: Համատեղելի առկա ներծծման խողովակաշարի հետ կամ ներառված համապատասխան ադապտերով: 1-21 Կափարիչով, պերֆորացված կամ այլ կերպ գոլորշու թափանցումն ապահովող գործիքային տուփ/տրեյ՝ մոտ 540×250×70 մմ (յուրաքանչյուր չափով թույլատրելի շեղում՝ ±10%) կամ այնպիսի ներքին չափերով, որոնք առանց վնասման տեղավորում են առաջարկվող ամենաերկար գործիքը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Չժանգոտվող պողպատից կամ բարձր ջերմակայուն բժշկական պոլիմերից, գործիքները ֆիքսող տարրերով, բազմակի օգտագործման և գոլորշային ստերիլիզացման համար։ |